ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

օգոստոսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ 16-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՇՂԹԱՅԻ ԱՅԳՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հուլիսի 20-ի №Ե-356-21 գրությունը, որով վերջինս դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Աջափնյակ վարչական շրջանի 16-րդ թաղամասի 1-ին շղթայի այգում կառուցված պոմպակայանի սպառման համակարգն (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացնելու նպատակով տեխնիկական պայմաններ տրամադրելու խնդրանքով,

բ) որ Սպառման համակարգն Ընկերության էլեկտրական ցանցին միացվում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Դիմող անձ) դիմումի համաձայն՝ որպես առանձին սպառման համակարգ, և որպես բաժանորդ հանդես է գալիս Աջափնյակ վարչական շրջանը,

գ) Դիմող անձի 2021 թվականի հուլիսի 19-ի №16/16899 գրությունը, որի համաձայն՝ վերոնշյալ պոմպակայանի կառուցման համար նախատեսված տարածքը համայնքային սեփականություն է,

դ) Ընկերության 2021 թվականի օգոստոսի 3-ի №Ե-394-21, Դիմող անձի 2021 թվականի օգոստոսի 9-ի №01/16-97342h և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 5-ի №28/97237 գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգն էլեկտրական ցանցին սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով միացնելուն,

և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Կանոնների 14.4 կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ առանց Կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթուղթը ներկայացնելու:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
օգոստոսի 2021թ.